Հավելված N 1
ՀՀ կառավարության 2017 թ.
հուլիսի 13-ի նիստի N 30
արձանագրային որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագիրը (այսուհետ՝ ռազմավարություն) և երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը մշակվել է ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունվարի 14-ի N 131-Ն որոշման N 1 հավելվածի 88-րդ կետի:

2. Ռազմավարությունը փաստաթուղթ է, որտեղ ըստ ոլորտների ներկայացվում է երեխաների իրավունքների պաշտպանության նպատակները, գերակայությունները, հիմնախնդիրները և դրանց լուծմանն ուղղված համապատասխան միջոցառումները՝ հաշվի առնելով նաև Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունները, ինչպես նաև ոլորտում իրականացվող Հայաստանի Հանրապետության օրենսդրության բարեփոխումները:

3. Սույն ռազմավարության շրջանակներում կարևորվում է երեխայի իրավունքների պաշտպանության ապահովումը, երեխաներին որակյալ ծառայություններ մատուցելը, երեխաներին իրենց վերաբերող հարցերի քննարկմանը մասնակից դարձնելը:

4. Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանությունն ամրագրված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ: 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեի արդյունքում ընդունված Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխություններով առաջին անգամ՝ առանձին հոդվածով (Հոդված 37) ամրագրվեց երեխայի իրավունքների պաշտպանությունը: Հայաստանի Հանրապետության նախագահի 2012 թվականի հոկտեմբերի 29-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը հաստատելու մասին» ՆԿ-159-Ն կարգադրությամբ ևս կարևորվում է երեխայի իրավունքների պաշտպանությունը:

5. 1996 թվականի մայիսի 29-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որի հիման վրա Հայաստանի Հանրապետության

կառավարությունը յուրաքանչյուր տարի ընդունում է երեխայի իրավունքների պաշտպանության տարեկան ծրագիր:

6. Երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետությունն ինտեգրված է միջազգային հանրությանը: ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի կատարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության երրորդ և չորրորդ համատեղ պարբերական զեկույցի առնչությամբ՝ Երեխայի իրավունքների հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2013 թվականի ամփոփիչ դիտարկումները հիմնականում վերաբերում էին երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում իրականացված բարեփոխումներին և առկա բացերին, ներառյալ օրենսդրությանը, համապարփակ քաղաքականությանն ու ռազմավարությանը, համակարգմանը, ռեսուրսների բաշխմանը և անկախ մշտադիտարկմանը: Հանձնաժողովը կոչ է արել Հայաստանի Հանրապետությանը՝ ձեռնարկել վերոհիշյալ դիտարկումների մեջ ներառված առաջարկությունների կատարման համար անհրաժեշտ բոլոր միջոցառումները, տրամադրել Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային ծրագրի և երեխաների իրավունքների բնագավառում ընդունված այլ ռազմավարությունների և ծրագրերի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ բոլոր մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսները, Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային ծրագրի և դրա կատարման արդյունավետության նպատակով ապահովել այլ ռազմավարությունների և ծրագրերի կատարման արդյունավետության պարբերական գնահատումը: Հանձնաժողովը կոչ է արել նաև ձեռնարկել միջոցառումներ՝ Երեխայի իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովին վերապահելու անհրաժեշտ լիազորություններ և տրամադրել համարժեք մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսներ: Ինչպես նաև բարելավել միջոլորտային համակարգումը՝ նախարարությունների, ազգային կառույցների և մարզային ու տեղական կառույցների միջև՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով գյուղական տարածաշրջաններին և առավել անբարենպաստ պայմաններում գտնվող տարածաշրջաններին: Ռեսուրսների բաշխման առումով Հանձնաժողովն առաջարկել է զգալիորեն ավելացնել և համարժեք մակարդակների հասցնել առողջապահության և կրթության բնագավառներում կատարվող հատկացումները, ձևավորել բյուջետավորման երեխայակենտրոն գործընթաց:

7. Երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում ուղենիշային դեր ունի Երեխայի իրավունքների պաշտպանության ռազմավարական ծրագիրը: Առաջին ռազմավարական ծրագիրն ընդունվել էր Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015 թվականների ազգային ծրագիրը հաստատելու մասին» N 1745-Ն որոշմամբ, որի կարևոր ձեռքբերումներից էր երեխայի իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգի ստեղծումը, որն ապահովում է համակարգված մոտեցում՝

համայնքային, մարզային և հանրապետական մակարդակներում: Երկրորդ ռազմավարական ծրագրով, որն ընդունվել էր ՀՀ կառավարության 2006 թվականի հունվարի 12-ի N 206-Ն որոշմամբ, հաստատվել էր կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների սոցիալական պաշտպանության բարեփոխումների 2006-2010 թվականների ռազմավարությունը: Ծրագրի հիմնական նպատակը՝ երեխայի բարեկեցիկ կյանքի ապահովումն էր ընտանիքում և հասարակության մեջ: Հաջորդող ռազմավարական ծրագիրը հաստատվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագրի միջոցառումների ժամանակացույցը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 18-ի N 1745-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1694-Ն որոշմամբ:

Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագրի հիմնական նպատակը երեխայի բարեկեցիկ կյանքն ընտանիքում և հասարակության մեջ ապահովելն էր՝ մանկատներում և երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններում երեխաների թվի նվազեցման և այդ հաստատություններ երեխաների հոսքի կանխարգելման միջոցով:

II. ՆՊԱՏԱԿԸ, ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

8. Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրի **նպատակը՝** կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության ապահովումն է:

9. **Սույն ռազմավարության գերակայություններն են՝**

1) երեխայի իրավունքների պաշտպանության համակարգի բարելավումը.

2) հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթության, ինչպես նաև ուսումնական հաստատություններում սովորողների համալիր անվտանգության ապահովումը.

3) երեխայի առողջության պահպանման իրավունքի ապահովումը.

4) իրավախախտում կատարած, բռնության ենթարկված, հակասոցիալական վարք դրսևորած անչափահասների վաղ հայտնաբերումը, բռնության դեպքերի կանխարգելումը.

5) երեխաների մշակութային կյանքին մասնակցության, մշակութային և ստեղծագործական կարողությունների զարգացման, գործունեության խթանման,

մշակութային արժեքներին հաղորդակցման, գեղարվեստական կրթություն ստանալու ապահովումը.
6) երեխաների արդարադատության մատչելիության ապահովումը:

10. **Սույն ռազմավարության հիմնական սկզբունքներն են՝**
1) երեխաների հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը, երեխայի լավագույն շահը ճանաչելը.
2) երեխաներին տրամադրվող ծառայությունների մատչելիությունը՝ տրամադրվող սոցիալական ծառայությունների հասանելիության ապահովումը և հասցեականությունը.
3) երեխաների մասնակցության ապահովումն իրենց խնդիրների լուծման գործընթացում.
4) սեռի հատկանիշով պայմանավորված խտրականության բացառումը.
5) երեխային և նրա ընտանիքին մատուցվող ծառայությունների ապակենտրոնացումը.
6) երեխայի պաշտպանության հարցում բոլոր շահագրգիռ կողմերի միասնական մոտեցում և փոխհամագործակցության ապահովումը՝ միջգերատեսչական մակարդակում մշտադիտարկման և հաշվետվողականության գործուն համակարգի հիման վրա:

11. **Ռազմավարության հիմնական միջոցառումները ներառում են հետևյալ ոլորտները՝**
1) սոցիալական պաշտպանություն.
2) առողջապահություն.
3) կրթություն.
4) մշակույթ և սպորտ.
5) անչափահասների արդարադատություն:

III. ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

12. Երեխայի բոլոր իրավունքները փոխկապակցված են և անբաժանելի: ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի հիմքում իրավունքների 3 խումբ է դրված, որոնք ապահովում են համալիր մոտեցումը՝ պաշտպանության իրավունքը, ծառայություններ ստանալու իրավունքը, երեխաների մասնակցային իրավունքը: Երեխայի իրավունքներով Հայաստանի Հանրապետությունում զբաղվում են տարբեր գերատեսչություններ որոնցից յուրաքանչյուրը մասնագիտացած է իր ոլորտում և շատ դեպքերում դրսևորում է հատվածական մոտեցում: Խնդիր է երեխայի խնդիրների հանդեպ համալիր մոտեցման բացակայությունը: Պաշտպանության իրավունքը հաճախ չի դիտվում առաջնահերթություն: Ավելին, երեխային մատուցվող ծառայությունները երբեմն

ուղեկցվում են նրա պաշտպանության իրավունքների խախտումով: Դրսևորվում են խտրականության, բռնության մոտեցումներ: Խնդիրներ կան նաև մասնակցային իրավունքները ապահովելու, այդ թվում՝ երեխաներին ուղղված բյուջետավորման գործընթացում: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 37-րդ հոդվածի համաձայն, երեխան իրավունք ունի ազատ արտահայտելու իր կարծիքը, որը երեխայի տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, հաշվի է առնվում իրեն վերաբերող հարցերում: Այդուհանդերձ, ծնողները, ընտանիքները, երեխաների հետ աշխատող հաստատությունների մասնագետները ոչ միշտ են երեխաներին մասնակից դարձնում իրենց առնչվող խնդիրների քննարկմանը: Մասնակցային իրավունքի ապահովումը երեխայի բարեկեցիկ ապագան ապահովելու, նրան ինքնուրույն կյանքի պատրաստելու, որոշումներ կայացնելու, հմտություններ զարգացնելու տեսանկյունից առաջնային դեր ունի:

Հիմնախնդիր է նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի վաղ հայտնաբերման, ուղղորդման, խնդիրների կանխարգելման, վաղ և համակարգված միջամտության հարցերում միջգերատեսչական համագործակցության պակասը: Երեխաները գտնվում են տարբեր հաստատություններում և ունեն տարբեր խնդիրներ և հաճախ երեխաների հետ աշխատող մասնագետները նկատում և կարևորում են միայն ոլորտի հետ իրենց առնչվող խնդիրները: Արդյունքում, խնդիրները չեն կանխարգելվում և վաղ հայտնաբերվում, ինչը դժվարացնում է երեխայի հետ հետագայում աշխատող մասնագետների գործը: Առկա են նաև ուղղորդման, համակարգման ու վաղ միջամտության խնդիրներ: Դրանք հիմնականում արդյունք են այն բանի, որ տեղական մասնագետների միջև հորիզոնական համագործակցությունը ոչ միշտ է աշխատում: Առանձնահատուկ կարևոր է կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված, հաշմանդամություն ունեցող, միգրանտ, պատերազմական գործողություններից, աղետներից կամ արտակարգ իրավիճակների հետևանքով տուժած, երեխաների հետ օպերատիվ և համագործակցված աշխատանքը, մասնագետների պակասը, որքան էլ կարևոր է միջգերատեսչական համագործակցությունը, այդուհանդերձ, կարևոր է նաև գերատեսչությունների մասնագետների գիտելիքները և հմտությունների ընդլայնումը: Շատ խնդիրներ հեշտ և արագ կլուծվեն, եթե մասնագետները տիրապետեն հարակից ոլորտներին առնչվող որոշակի հիմնարար գիտելիքների և հմտությունների: Հայաստանում բացակայում է երեխայի իրավունքների մշտադիտարկման և հաշվետվողականության համակարգը, ինչպես նաև՝ երեխաների իրավունքների համալիր մշտադիտարկման հարցերով զբաղվող համակարգող մարմինը: Բացակայում է երեխայի իրավունքների պաշտպանության համալիր միասնական մշտադիտարկման համակարգը:

13. Վերը նշված խնդիրները ընդհանրական են, ստորև ներկայացվում է երեխայի իրավունքների պաշտպանության հիմնախնդիրները ըստ ոլորտների՝

1)երեխաների իրավունքների սոցիալական պաշտպանության ոլորտում (այսուհետ՝ սոցիալական ոլորտ) սոցիալական քաղաքականությունն ուղղված է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների կյանքի որակի բարելավմանն ու սոցիալական պաշտպանության երաշխիքների ապահովմանը, նրանց մատուցվող այլընտրանքային ծառայությունների ցանցի զարգացմանը, ինչպես նաև երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը, դրանց լուծմանն ուղղված պետական ծրագրերի մշակմանը: Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների վիճակի բարելավման նպատակով ընդունվել է իրավական ակտերի ամբողջ շարք, կատարելագործվում է այս բնագավառին վերաբերող Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը, մշակվում և իրականացվում են նպատակային ծրագրեր:

2) սոցիալական ոլորտի հիմնախնդիրներն են՝

ա. երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի, խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների ոչ արդյունավետ գործունեությունը մասնավորապես երեխաների իրավունքների պաշտպանության համար պատասխանատուների բացակայությունը, գործառույթների վարչարարական բնույթը և համանման պահանջներով կրկնությունները,

բ. Հայաստանի Հանրապետությունում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի կազմակերպման համայնքային ծառայությունների պակասը, իսկ համայնքների մեծ մասում՝ դրանց բացակայությունը,

գ. պետական հոգածության կարիք ունեցող առողջական խնդիրներով երեխաների թվի աճը, հանրապետությունում հաշմանդամություն ունեցող երեխաներին ուղղված մասնագիտական ծառայությունների և վերականգնողական կենտրոնների ոչ բավարար քանակը,

դ. որդեգրման վերահսկողության մեխանիզմների բացակայությունը, որդեգրող թեկնածու ծնողներին առաջադրվող պահանջների վարչարարական բնույթը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին որդեգրման ենթակա երեխաների տվյալների տրամադման ոչ արդյունավետ մեխանիզմների առկայությունը,

ե. խնամակալության, խնամատարության և որդեգրության գործընթացի պետական աջակցության միասնական գաղափարախոսական հենքի բացակայությունը,

զ. արտակարգ իրավիճակներում հայտնված, դրանց հետևանքով տեղահանված կամ փախստական դարձած երեխաների խնամքի, պաշտպանության և ինտեգրման պատշաճ և ժամանակին արձագանքման մեխանիզմի պակասը,

է. Հայաստանի Հանրապետությունում աշխատանքի վատթարագույն ձևերում ընդգրկված աշխատող երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված վերահսկողության մեխանիզմների բացակայությունը,
ը. երեխայի նկատմամբ բռնության երևույթի հանդեպ հասարակական հանդուրժողականությունը,
թ. երեխաների հանդեպ բռնության երևույթի կանխարգելման և ուղղորդման համապատասխան մեխանիզմների բացակայությունը մասնավորապես զոհի և բռնարարի հետ աշխատանքում մասնագիտացված ծառայությունների պակասը,
ժ. կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների վերաբերյալ տվյալների ոչ բավարար տեղեկատվական բազայի առկայությունը, բազայի ոչ միասնական լինելը և բազայի տվյալների հենքի վրա քաղաքականության մշակման աշխատանքային մշակույթի բացակայությունը,
ժա. երեխաների իրավունքների պաշտպանության մշտադիտարկման և գնահատման միասնական համակարգի բացակայությունը.

3) առողջապահության ոլորտում խնդիրները կարևորված են ազգային մակարդակում և որպես գերակայություն արտացոլված են Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ, ռազմավարական և ծրագրային մի շարք փաստաթղթերում: Վերջին զարգացումներից է 2016 թվականի սեպտեմբերի 2-ի Հայաստանի Հանրապետության կառավարության նիստի N 34 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Երեխաների և դեռահասների առողջության բարելավման ռազմավարությունը և 2016-2020թթ. գործողությունների ծրագիրը»:

4) առողջապահության ոլորտի հիմնախնդիրներն են՝

ա. ոլորտի իրավական դաշտի բարելավման, միջազգային չափանիշներին համապատասխանեցման անհրաժեշտությունը,

բ. պետական պատվերի շրջանակներում երեխաներին և դեռահասներին տրամադրվող ծառայությունների կազմակերպման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների շարունակական աճի անհրաժեշտությունը,

գ. երեխաներին և դեռահասներին ուղղված առողջապահական ծառայությունների որակի և մատչելիության հետագա բարելավման անհրաժեշտությունը. բուժօգնության որակի ապահովման մեխանիզմների, աջակցող վերահսկման համակարգի կատարելագործման անհրաժեշտությունը,

դ. մարդկային ռեսուրսների անընդմեջ աճող հիմնախնդրի լուծման, հատկապես մարզերում մանկաբուժական ոլորտի մասնագետներով ապահովվածության բարձրացման անհրաժեշտությունը,

ե. առողջ և հիվանդ երեխաների վարմանն առնչվող ապացուցահեն կլինիկական ուղեցույցների մշակման, վերանայման և ներդրման անհրաժեշտությունը,

զ. ըստ մակարդակների տարբերակված բուժօգնության տարանջատման և ուղեգրման համակարգի կատարելագործման անհրաժեշտությունը,

ե. առողջության առաջնային պահպանման համակարգի բուժանձնակազմի որակյալ և մոտիվացված աշխատանքի խթանման, պատրոնաժ և կանխարգելիչ աշխատանքների ուժեղացման անհրաժեշտությունը,

զ. առանձին բժշկական կազմակերպությունների ֆիզիկական պայմանների բարելավման և սարքավորումների արդիականացման անհրաժեշտությունը,

ե. նորածինների և վաղ հասակի երեխաների մահացության և հիվանդացության ցուցանիշների նվազեցման անհրաժեշտությունը,

զ. մանկական հաշմանդամության և երեխայի զարգացման խանգարումների կանխարգելման և բուժման բարելավման, ինչպես նաև պալիատիվ խնամքի համակարգի ներդրման անհրաժեշտությունը,

է. դպրոցահասակ երեխաների շրջանում առողջ ապրելակերպի, ֆիզիկական ակտիվության, սնուցման, ռիսկային վարքագծի, սեռական և վերարտադրողական առողջության, ֆիզիկական և հոգեկան առողջությանը վերաբերվող վարքագծի ուսումնասիրման և բարելավման անհրաժեշտությունը,

ը. երեխաների հոգեկան առողջություն. մանկական հոգեբուժական հիվանդանոցային ծառայության բարելավման անհրաժեշտությունը.

5) կրթության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակը՝ յուրաքանչյուր քաղաքացու իր հակումներին և ընդունակություններին համապատասխան որակյալ կրթություն ստանալու ապահովումն է: Երեխայի հիմնական իրավունքներից է կրթության իրավունքը: Միջնակարգ կրթությունը Հայաստանի Հանրապետության պետական ուսումնական հաստատություններում անվճար է: Համաձայն «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ Հայաստանի Հանրապետությունն ապահովում է կրթության իրավունք՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից կամ այլ հանգամանքներից: Մասնագիտական կրթության իրավունքի սահմանափակումները նախատեսվում են օրենքով.

6) կրթության ոլորտի ռազմավարական հիմնախնդիրներն են՝

ա. նախադպրոցական կրթական ծրագրերում երեխաների ընդգրկվածության ոչ բավարար մակարդակը, շատ համայնքներում նախադպրոցական կրթական ծառայությունների բացակայությունը,

բ. դպրոցից դուրս մնացած երեխաների հաշվառման և նրանց կրթության մեջ ընդգրկման համակարգի թերի լինելը,

գ. հանրակրթական դպրոցների սահմանափակ կարողությունները՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության ապահովման գործում,

դ. կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների գնահատման ու վկայագրման գործիքակազմերի վերանայման անհրաժեշտությունը,

ե. հանրակրթության երրորդ աստիճանում սովորողների ընդգրկվածության ցածր ցուցանիշը,

զ. նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների համալիր անվտանգության ոչ բավարար մակարդակը,

է. երեխաների ազատ ժամանցի ու հանգստի կազմակերպման համար տրամադրվող սահմանափակ պետական հատկացումները, ինչի արդյունքում այդ ծառայությունները շատերի համար դառնում են անհասանելի.

7) մշակույթի ոլորտում ռազմավարության հիմնական նպատակն անհատի զարգացմանն ուղղված համակողմանի ծրագրերի իրականացումն է: Ոլորտում կարևորվում է երեխայի՝ մշակութային կյանքին մասնակցության, մշակութային և ստեղծագործական գործունեության իրականացման, մշակութային արժեքներին հաղորդակցման, գեղարվեստական կրթություն ստանալու և այդ կրթության ձևերն ու միջոցները ընտրելու հնարավորության իրավունքներն ու ազատությունները: Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը երեխաների գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության բնագավառում միասնական քաղաքականություն իրականացնելու նպատակով ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի», Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի «Մշակույթը» բաժնի դրույթներով:

8) Մշակույթի ոլորտի ռազմավարական հիմնախնդիրներն են՝

ա. գեղարվեստական կրթության մատչելիության ոչ բավարար մակարդակը,

բ. գեղարվեստական կրթական հաստատությունների բնականոն գործունեության ապահովման անհրաժեշտությունը,

գ. երեխաների ստեղծագործական ներուժի վերարտադրման և զարգացման պայմանների բացակայությունը,

դ. շնորհալի երեխաների ու երիտասարդների բացահայտման, նրանց կրթության և ստեղծագործական ունակությունների զարգացման ու ինքնադրսևորման համար համապատասխան պայմանների բացակայությունը:

9) 2015 թվականից Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համակարգմամբ ստեղծվել և գործում է Անչափահասների արդարադատության խորհուրդը, որը ներառված է եղել նաև 2013-2016թթ. երեխաների իրավունքների պաշտպանության եռամյա ծրագրի մեջ:

Այնուամենայնիվ, իրականացված ծրագրերի արդյունքը, ինչպես նաև միջազգային փորձը վկայում են ոլորտում համակարգող մարմնի անհրաժեշտության մասին՝ ծրագրերն առավել միասնական, համալիր և նպատակային դարձնելու նպատակով կարիք կա ներգրավվել շահագրգիռ պետական կառույցներ, ինչպես նաև ոլորտի միջազգային և հասարակական կազմակերպություններ: Արդյունքում կբարելավվի անչափահասների վերաբերյալ օրենսդրական դաշտը, կձևավորվեն միջգերատեսչական կապեր՝ ի նպաստ օրենքի հետ առնչվող անչափահասների ֆիզիկական, հոգեկան, հոգևոր, բարոյական և սոցիալական զարգացմանը և հասարակության մեջ վերաինտեգրմանը, կբարելավվի օրենքին առնչվող երեխաների իրավուքների պաշտպանության և ծառայությունների հասանելիության օրենսդրությունը և կառուցակարգերը, անչափահասների արդարադատության ոլորտում կզարգանան երեխայակենտրոն մոտեցումներ:

10) անչափահասների ոլորտի ռազմավարական հիմնախնդիրներն են՝

ա. անչափահասների կողմից կատարված իրավախախտումների պատճառների ու պայմանների վեր հանման, զանցանքների և հանցանքների կանխման մեխանիզմների բարելավման անհրաժեշտությունը,

բ. անչափահաս իրավախախտի և տուժողի միջև համագործակցային պայմանների բացակայությունը,

գ. օրենքին առնչվող երեխաների հետ աշխատանքում մասնագիտացված, երեխայակենտրոն մոտեցումների ոչ բավարար վիճակը,

դ. վերականգնողական արդարադատության դրույթների կիրառման ոչ արդյունավետ մեխանիզմները,

ե. քրեադատավարական համակարգի՝ անչափահաս տուժողների նկատմամբ զգայուն մոտեցումների ձևավորման անհրաժեշտությունը, նրանց իրավունքների վերականգնման կառուցակարգերի ոչ արդյունավետ կիրառումը,

զ. օրենքին առնչվող երեխաների (տուժող, վկա, իրավախախտ) կարիքներին համապատասխան ծառայությունների ոչ բավարար մատչելիությունը,

է. ազատությունից զրկված անչափահասների իրավունքների պաշտպանության բնագավառի ոչ լիարժեք համապատասխանությունը՝ միջազգային չափորոշիչներին,

ը. պրոբացիոն ծառայության անչափահաս շահառուների վերասոցիալականացման ծրագրերի բացակայությունը:

IV. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

14. Սույն ռազմավարության ակնկալվող արդյունքներն են՝

1) սոցիալական ոլորտ՝

ա. բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունների

երեխաների առնվազն 50%-ի վերադարձը ընտանիքներ՝ ապահովելով մատուցվող ծառայությունների շարունակականություն,
բ. մատուցվող ծառայությունների առնվազն 35%-ի մրցակցային սկզբունքով պատվիրակում հասարակական կազմակերպություններին,
գ. այլընտրանքային ծառայություններ մատուցող առնվազն 30 նոր կենտրոնի ստեղծում՝ ապակենտրոնացման սկզբունքով,
դ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից որդեգրված, խնամակալության և խնամատարության հանձնված երեխաների խնամքի նկատմամբ վերահսկողության գործուն մեխանիզմների առկայություն,
ե. կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին, ընտանիքներին և երեխաների խնամքի այլընտրանքային մասնագիտական ծառայություններ մատուցող մարմիններին՝ մասնագիտական օգնության ցուցաբերման մշակված մեխանիզմների առկայություն,
զ. երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտին վերաբերող տեղեկատվական բարելավված համակարգ,
է. բռնության ենթարկված երեխաների ուղղորդման և տեղեկատվության հավաքագրման առկա մեխանիզմների առկայություն, ինչպես նաև մասնագիտական աջակցության ծառայությունների մատուցում,
ը. ուսումնական ծրագրերին համապատասխան երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունների համակարգի տարբեր կառույցների կադրերի մասնագիտական ուսուցում և վերապատրաստում,
թ. երեխաների իրավունքների պաշտպանության մշտադիտարկման և գնահատման միասնական համակարգ.

2) առողջապահության ոլորտ՝
ա. նորածնային (0-28 օրական) մահացության ցուցանիշը կկրճատվի նվազագույնը 15%-ով (ելակետ՝ 6.7 ‰, նպատակակետ՝ ≤ 5,5 ‰),
բ. բնածին արատներով ծնված երեխաների տեսակարար կշիռը նորածինների ընդհանուր թվաքանակում կնվազի շուրջ 15 %-ով (ելակետ՝ 1.7 ‰, նպատակակետ՝ ≤ 1,5‰),
գ. մանկական (0-1 տարեկան) մահացության ցուցանիշը կնվազի 20%-ով (ելակետ՝ 8,8 ‰, նպատակակետ՝ ≤ 7 ‰),
դ. մինչև 5տ. երեխաների մահացության ցուցանիշը կնվազի 20%-ով (ելակետ՝ 10,3 %, նպատակակետ՝ ≤ 8,5 ‰),
ե. մինչև 1 տարեկան երեխաների հիվանդանոցային մահաբերության ցուցանիշը կնվազի 10%-ով (ելքային ցուցանիշ՝ 1.7%, նպատակակետ՝ ≤ 1,5%),
զ. մինչև 14 տարեկան երեխաների հիվանդանոցային մահաբերության ցուցանիշը կնվազի 20%-ով (ելքային ցուցանիշ՝ 0,5%, նպատակակետ՝ ≤ 0,4 %),
է. առանձին պատվաստումներով ընդգրկման ցուցանիշի 95% և ավելի բարձր մակարդակի պահպանում,

ը. բոլոր նպատակային տարիքային խմբերում պատվաստումներում ≥ 95% ամբողջական ընդգրկվածության ապահովում.

3) կրթության ոլորտ՝

ա. նախադպրոցական ավագ տարիքային խմբի երեխաների առնվազն 90%-ի ընդգրկվածություն,

բ. Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում ներդրված համընդհանուր նեռական կրթություն, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին եռամակարդակ մանկավարժահոգեբանական աջակցության տրամադրում, երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման ու վկայագրման նոր գործիքակազմի կիրառում, հանրակրթական դպրոցներում ներդրված ուսուցչի օգնականի հաստիքներ,

գ. համընդհանուր ներառական կրթությանն անցման արդյունքում՝ թվով 15 հատուկ հանրակրթական դպրոցներից տեղափոխված երեխաների համար կրթությանն աջակցող ծառայությունների շարունակական մատուցում հանրակրթական ուսումնական հաստատության կրթական միջավայրում,

դ. մենթոր դպրոցների համակարգի ներդրում 100 գյուղական դպրոցների ընդգրկմամբ, գյուղական համայնքներում՝ ավագ դպրոցում ընդգրկվածության մակարդակի աճ՝ հատկապես բնակչության սոցիալապես անապահով ընտանիքների շրջանում,

ե. 6-18 տարեկանների ընդգրկվածության ցուցանիշի աճ,

զ. ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար տպագրված են ուսումնական պլանով նախատեսված՝ հանրակրթական առարկայական ծրագրեր ու դասագրքեր, ազգային փոքրամասնությունների լեզուները դասավանդող վերապատրաստված ուսուցիչների, բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունված ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների թվաքանակի աճ,

է. հասարակության ակտիվ, պատասխանատու քաղաքացիներ, որոնք ունակ են դրսևորել առողջ ապրելակերպ, պաշտպանել սեփական և հարգել ուրիշների իրավունքները, ինքնուրույն որոշումներ կայացնել, արժևորել սեփական ինքնությունը և առաջնորդվել հանդուրժողականության սկզբունքներով,

ը. հանրակրթական ուսումնական հաստատությունների առնվազն 24%-ում համալիր անվտանգության ապահովում (Ասիական զարգացման բանկի աջակցությամբ ամրացվել է՝ 46 դպրոց, ՀԲ վարկային ծրագրի միջոցներով՝ 20 դպրոց, իսկ Դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրով՝ մինչև 2030 թթ. նախատեսված է ամրացնել շուրջ 400 դպրոցներ),

թ. հանրակրթական ուսումնական հաստատություններում աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործելու պլանների առկայություն, սովորողների և աշխատակիցների աղետների ռիսկերի նվազեցման կրթություն,

ժ. տարեկան շուրջ 4800՝ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների ամառային հանգստի կազմակերպում.

4) մշակույթի ոլորտ՝

ա. գեղարվեստական կրթության մատչելիությունն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության երաժշտական և արվեստի դպրոցներում ուսման վարձավճարների փոխհատուցում, երեխաների համար գիտաճանաչողական ուղևորությունների կազմակերպում երեխաների աշխարհայացքի զարգացմանը, հայրենասիրական դաստիարակությանը, գեղագիտական ճաշակի ձևավորմանը և ազգային արվեստին ու մշակութային ժառանգության հաղորդակցմանը նպաստելու նպատակով,

բ. «Երգող Հայաստան» մանկապատանեկան երգչախմբերի հանրապետական մրցույթի կազմակերպում՝ Հայաստանի Հանրապետության և Արցախի լավագույն երգչախմբերի բացահայտմանը, նրանց կատարումները հանրությանը ներկայացմանը նպաստելու նպատակով,

գ. մանկական գրականության հրատարակման խթանում՝ մանուկների աշխարհայացքի ձևավորմանը, հայրենասիրական դաստիարակությանը, ազգային և համամարդկային արժեքների սերմանմանը, գրադարանների մանկական գրականության համալրմանը նպաստելու նպատակով,

դ. մանկապատանեկան թատրոնների «Նռան հատիկ» հանրապետական փառատոնի անցկացում՝ մանկապատանեկան թատրոնի զարգացմանը, շնորհալի երեխաների հայտնաբերմանը և ստեղծագործական գործունեության խթանմանը նպաստելու նպատակով,

ե. մանկական մուլտֆիլմերի նկարահանում, մանկապատանեկան կինոյի և անիմացիայի փառատոնի իրականացում՝ մանկական կինոյի զարգացմանը, հայրենասիրական դաստիարակությանը և աշխարհայացքի ընդլայնմանը, ժամանցի և հանգստի կազմակերպմանը նպաստելու նպատակով.

5) անչափահասների արդարադատության ոլորտ՝

ա. արդարադատության ոլորտում երեխաների հետ աշխատող մասնագետների և ծառայողների վերապատրաստումներ երեխայակենտրոն մոտեցումների զարգացման նպատակով, մասնագիտական ուղեցույցների, ձեռնարկների տպագրություն, առնվազն 3 վերապատրաստումներ, 5 ձեռնարկ և ուղեցույցներ,

բ. իրավախախտ, տուժող և վկա երեխաների կարիքների, դրանց ապահովման համար անհրաժեշտ ծառայությունների մատչելիության ուսումնասիրություն, ուսումնասիրության արդյունքում ստացված ծառայությունների հասանելիության շեմի բարձրացում՝ առնվազն 20% աճ,

գ. քրեակատարողական հիմնարկում գտնվող, կալանավորված և դատապարտյալ անչափահասների կրթամշակութային ուսուցում և կրթության ու զարգացման իրավունքին ուղղված միջոցառումներ, առնվազն 80%-ի մասնակցություն,

դ. պրոբացիայի ծառայության շահառու անչափահասների վերասոցիալականացման ծրագրերի մշակում և կիրառում, առնվազն՝ 2 ծրագիր, 6 միջոցառում:

V. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

15. Ռազմավարության ներդրման ընթացքում առաջնահերթ ուշադրություն կդարձվի շարունակական մոնիթորինգի և վերահսկողության անցկացմանը, որը ուղղված կլինի սույն ռազմավարության ներդրման արդյունավետության գնահատմանը, ծագած խնդիրների հստակեցմանը և հնարավոր լուծումներին: Ռազմավարության լայնածավալ գնահատումը պետք է հիմնվի մի քանի աղբյուրների, այն է՝ մոնիթորինգի և գնահատման, այլընտրանքային հետազոտությունների, պաշտոնական վիճակագրական տվյալների վերլուծության վրա, որոնց դրական արդյունքները և քաղած դասերը կօգտագործվեն տվյալ ռազմավարության շրջանակներում իրականացված ծրագրային միջոցառումների արդյունավետության գնահատման և հետագա զարգացումների ապահովման նպատակով:

16. 2019 թվականին կիրականացվի ռազմավարության առաջընթացի միջանկյալ գնահատում, իսկ 2021 թվականին՝ ամփոփիչ գնահատում:

17. Երեխաների իրավունքների մշտադիտարկման և հաշվետվողականության ապահովման հարցերով կզբաղվի համապատասխան մարմինը՝ երեխաների իրավունքների մշտադիտարկման հայեցակարգի և գործողությունների պլանի հիման վրա, որի կողմից կիրապարակվի տարեկան զեկույց-հաշվետվություն՝ երեխաների իրավունքների պաշտպանության մշտադիտարկման, վիճակի, ինչպես նաև սույն ռազմավարության հիմնական ձեռքբերումների և մարտահրավերների վերաբերյալ:

VI. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ

18. Ռազմավարության իրականացման ընթացքում հնարավոր են որոշակի գործողությունների ժամկետների երկարաձգումներ, պայմանավորված լրացուցիչ նախապատրաստական աշխատանքներ իրականացնելու հանգամանքով: Անհրաժեշտության դեպքում գործողությունները կտեղափոխվեն հաջորդ տարի կամ կներառվեն հաջորդ ռազմավարության մեջ:

19. Ռազմավարության իրականացման ընթացքում հնարավոր են որոշակի խնդիրներ համակարգային փոփոխությունների հետ կապված: Նոր համակարգերի, մեխանիզմների ներդրումը հաճախ բախվում է որոշակի դիմադրության, թյուրընկալման, մասնագիտական ոչ բավարար հմտությունների: Կիրականացվեն իրազեկման և կարողության ստեղծման ծրագրեր՝ ռիսկը նվազագույնի հասցնելու միտումով: